ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«30» հունիսի 2016 թվականի N: 261-Ա ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՒՄ ԿՆՔՎԱԾ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՀԱՄԱՁԱՅՆ ՁԵՎԱՎՈՐՎԱԾ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ԽՈՐՀՐԴԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 15-Ի N 461-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «բ» ենթակետով, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2016 թվականի փետրվարի 11-ի N 25-Ն հրամանի N 1 հավելվածի 3.8-րդ կետով, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2016 թվականի մարտի 11-ի թիվ ԱԱ/ԱՄ-2-4/2066-16 գրությունը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյանի տարածքային մակարդակում 2016 թվականի ապրիլի 27-ին կնքված սոցիալական համագործակցության համաձայնագրի համաձայն ձևավորված համակարգող խորհրդի անհատական կազմը՝ համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2009 թվականի դեկտեմբերի 15-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի Ախուրյանի սոցիալական ծառայությունների տարածքային գործակալությանը կից սոցիալական աջակցության խորհրդի անհատական կազմը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2007 թվականի մայիսի 7-ի թիվ 233 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 461-Ա որոշումը:

Հ. ՍԻՄՈՆՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզպետի 2016 թվականի
հունիսի30-ի N264Ա որոշման

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՒՄ ԿՆՔՎԱԾ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՀԱՄԱՁԱՅՆ ՁԵՎԱՎՈՐՎԱԾ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ԽՈՐՀՐԴԻ

Գագիկ Պետրոսյան - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի Ախուրյանի սոցիալական աջակցության տարածքային գործակալության պետ.

Ամալյա Ադամյան - Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի զբաղվածության պետական գործակալության Գյումրու զբաղվածության տարածքային կենտրոնի տնօրեն.

Սոնա Խաչատրյան - Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայության աշխատակազմի Ախուրյանի սոցիալական ապահովության տարածքային բաժնի առաջատար մասնագետ.

Մելանյա Գրիգորյան - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի թիվ 1 բժշկասոցիալական փորձաքննական հանձնաժողովի փորձագետ թերապևտ.

Լիպարիտ Տիգրանյան - «Ախուրյան համայնքային կենտրոն» հասարակական կազմակերպության անդամ.

Ելիզավետա Խաչատրյան - «Ծնող-դպրոց» հասարակական կազմակերպության նախագահ.

Գեղեցիկ Զախարյան - Ֆիզիկական անձ /փաստացի՝ քաղաք Գյումրի, Պարույր Սևակ փողոց, 2 շենք, բնակարան 55/.

Մաքսիմ Շահբազյան - Ֆիզիկական անձ /գյուղ Ախուրյան, Հովսեփյան փողոց, տուն 7/.

Մաուլենա Մխոյան - Ֆիզիկական անձ /քաղաք Գյումրի, Ախուրյանի խճուղի, 6 փողոց, բնակարան 5/:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Խ.ՊՈՂՈՍՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է